**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

N 347- Ա

18 դեկտեմբերի 2015 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1361 - Ն որոշումը և ՀՀ Գեղարքունի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 221-Ա կարգադրությամբ ստեղծված մարզային հանձնաժողովի ակտերը՝ նոյեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը ուժեղ քամիների հետևանքով մարզի համապատասխան համայնքների շենք-շինություններին հասցված վնասների մասին

**որոշում եմ՝**

1. Ծովակ համայնքի «Վարդենիսի հացաընդունման» ԲԲ ընկերությանը /ձեռնարկության պետական գրանցման վկայական N 01 Ա 036571/ հատկացնել 186 000 /հարյուր ութսուն վեց հազար/ դրամ:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /պետ Յուրա Մուշեղյան/՝ ապահովել սույն որոշումից բխող ֆինանսական գործառույթները:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ